ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի ապրիլի 14-ի, ժամը 14:00-ի նիստի
N 9 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հասարակագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 19.02.2021) «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ - ավագ փորձագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ **Վարդան Կորյունի Աթոյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի փետրվարի 19-ի համարում հայտարարվել է մրցույթ **հասարակագիտության ամբիոնի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Հասարակագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար 2021 թվականի մարտի 16-ին ռեկտորին դիմում է ներկայացրել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ - ավագ փորձագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ **Վարդան Կորյունի Աթոյանը:** Նշվեց նաև, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՊՏՀ կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Վ.Կ.Աթոյանը ծնվել է 1980 թվականի նոյեմբերի 6-ին Երևանում: 1987-1997 թթ. սովորել և ավարտել է Երևանի N 75 միջնակարգ դպրոցը: 1997-2002 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի (այժմ՝ ՀՊՏՀ) կոմերցիայի և ապրանքագիտության ֆակուլտետը՝ «Մարքեթինգ» մասնագիտությամբ և ստացել է շուկայագետի որակավորում: 2010 թ. ավարտել է Եվրոպայի խորհրդի քաղաքական դասընթացների երևանյան դպրոցը, իսկ 2015 թ.՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության Դիվանագիտական դպրոցը:

Վ.Կ.Աթոյանը 2004 թվականին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 008 մասնագիտական խորհրդում պաշտպանել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2015 թվականին ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ: 2018 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի քաղաքագիտության 056 մասնագիտական խորհրդում պաշտպանել է քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը և ստացել քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նա հեղինակ և համահեղինակ է ավելի քան հինգ տասնյակ գիտական հոդվածների և գիտաժողովների զեկույցների, ինչպես նաև 9 մենագրության և 3 ուսումնամեթոդական աշխատանքների:

Վ.Կ.Աթոյանը 2019 թվականից Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի քաղաքագիտության 056 մասնագիտական խորհրդի անդամ է, ներգրավված է քաղաքական գիտությունների բնագավառի ԻԳ.00.02՝ «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» խորհրդի կազմում:

Վ.Կ.Աթոյանի աշխատանքային գործունեությունը. 2004 թ. մայիս - դեկտեմբեր՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ՝ գիտաշխատող, 2005 թ. հունվար - մարտ՝ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության վարչության պետի օգնական, 2005 թ. մարտ - 2007 թ. հոկտեմբեր՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետի խորհրդական, հաստիքացուցակի փոփոխությունից հետո՝ օգնական, 2007 թ. հոկտեմբեր - 2008 թ. հունիս՝ նույն նախարարության աշխատակազմի բաժնի պետ - վարչության պետի տեղակալ, 2008 թ. հունիս - 2010 թ. սեպտեմբեր՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետի օգնական, 2010 թ. սեպտեմբեր - 2013 թ. հունիս՝ ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի գլխավոր մասնագետ, 2013 թ. հունիս - 2016 թ. փետրվար՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն, 2016 թ. փետրվար - 2017 թ. հունվար՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ, 2018 թ. մայիսից առ այսօր՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ - ավագ փորձագետ: Վ.Կ.Աթոյանը 2012 թվականից մինչ օրս համատեղությամբ դասավանդում է ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում:

2008 թ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով Վ.Կ.Աթոյանին շնորհվել է ՀՀ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի

խորհրդականի դասային աստիճան, 2011 թ. Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հրամանով շնորհվել է ՀՀ քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2008 թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Վ.Կ.Աթոյանը պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով: 2014 թ. ՌԴ արտաքին գործերի նախարարության Ա.Գորչակովի անվան Ժանրային դիվանագիտության աջակցման հիմնադրամի կողմից պարգևատրվել է շնորհակալագրով գիտակրթական ծրագրերի կազմակերպման և ակտիվ մասնակցության համար: 2015 թ. նշված հաստատության կողմից պարգևատրվել է շնորհակալագրով հանրային դիվանանագիտության զարգացման գործում անձնական ներդրման համար:

2016 թ. Չինաստանի ժողովրդական Հանրապետության Շենսիի մանկավարժական համալսարանի Կենտրոնական Ասիայի ինստիտուտի կողմից Վ.Կ.Աթոյանին տրվել է հատուկ փորձագետի և հրավիրյալ պրոֆեսորի կարգավիճակ: 2019 թ. նույն համալսարանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» մշակույթի ուսումնասիրության ակադեմիայի կողմից նրան տրվել է հետազոտողի և հրավիրյալ պրոֆեսորի կարգավիճակ: 2020 թ. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի արձանագրած հաջողություններում նշանակալի ներդրման համար պարգևատրվել է ՀՊՏՀ ռեկտորի շնորհակալագրով:

Վ.Կ.Աթոյանը մասնակցել է ՀՀ-ում, ԱՄՆ-ում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Ավստրիայում, Բելառուսում, Բելգիայում, Իտալիայում, Լեհաստանում, Կիպրոսում, Մալայզիայում, Չինաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում և Ֆրանսիայում անցկացված մի քանի տասնյակ աշխատաժողովների, գիտաժողովների, համաժողովների, գիտակրթական և փոխանակման ծրագրերի, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների: Նա ՌԴ ԱԳՆ Ա.Գորչակովի անվան Հանրային դիվանագիտության աջակցման հիմնադրամի ակումբի անդամ է: Անդամակցում է նաև Ռուսաստանի քաղաքական գիտությունների ասոցիացիային (Մոսկվա, ՌԴ) և Ամերիկյան քաղաքական գիտությունների ասոցիացիային (Վաշինգտոն, ԱՄՆ):

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

Հարցը քննարկվել է իրավագիտության և քաղաքագիտության, փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնների՝ 2021 թվականի մարտի 25-ի համատեղ նիստում, որտեղ երաշխավորվել է Վ.Կ.Աթոյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ հասարակագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նիստում, որտեղ նույնպես որոշվել է (կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ Վարդան Կորյունի Աթոյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝

հասարակագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողից հետո Վ.Կ.Աթոյանը ներկայացրեց հասարակագիտության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ Վարդան Կորյունի Աթոյան թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ հասարակագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն, կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով **հասարակագիտության ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 51, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **հասարակագիտության ամբիոնի վարիչի** պաշտոնում համարել ընտրված քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ **Վարդան Կորյունի Աթոյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. ապրիլի 14

Երևան